Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Դեկտեմբեր 2024
Լրատու թիւ

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Ողջոյնի Խօսք

Սեպտեմբերի 8-ին սկսուեց 2024-2025 ուսումնական տարեշրջանը:
Աշակերտները, ծնողները, ուսուցչուհիները և հոգաբարձուները մեծ ոգևորութեամբ և ուրախութեամբ հաւաքուել էին վարժարանի սրահում:
Այս ուսումնական տարւայ առաջին զանգը հնչեց 10:30-ին: Բոլոր աշակերտները հաւաքուեցին իրենց դասարանների համար նշուած տեղերում:
Ուսումնական տարին սկսեցինք Տէրունական աղօթքով և մեր Հայրենիքի Օրհներգով:
Հոկտեմբերի 20-ին Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանում նշեցինք Ս. Թարգմանչաց տօնը:
Նոյեմբերի 17-ին տեղի ունեցաւ Ծնողական Ընդհանուր ժողովը:
Առաջին եռամսեակն աւարտուեց դեկտեմբերի 15-ին Նոր Տարւայ և Սուրբ Ծննդեան տօներին նուիրուած հանդէսով և հոգաբարձուների ու Ծնողական յանձնախմբի կողմից կազմակերպուած ճաշկերոյթով:
Այս եռամսեայ թերթում մենք տեղադրել ենք այս ուսումնական տարւայ առաջին եռամսեակի ընթացքում կատարուած աշխատանքները:
Յատուկ շնորհակալութիւն այս թերթի նիւթերը պատրաստողներ՝ Օր Վանուհի Պետրոսեանին, տիկին Թամարա Մինասեանին, տիկին Անուշ Գեղամեանին և տիկին Լենա Գիւլխանճեանին:

Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ օգտուելով առիթից շնորհաւորում եմ բոլորիդ Ամանորի և Սուրբ Ծնունդի առթիւ, մաղթում եմ Ձեզ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւն, անձնական երջանկութիւն և թող իրականութիւն դառնան Ձեր բոլորի նպատակներն ու երազանքները:
Գալիք տարին թող մեզ դարձնի էլ ավելի միասնական, համբերատար և հանդուրժող:
Թող այս Ամանորը բոլորիս համար լինի ուրախ ու բազում հրաշքներով լեցուն տարի:
Թող 2025 թուականը մեր հայրենիքի և աշխարհի համար լինի խաղաղութեան, միասնության, յաջողության, յաղթանակների և առաջընթացի տարի:
Յարգանք և խոնարհում, խունկ և աղօթք, յաւերժ փառք և օրհնութիւն Արցախեան պատերազմներում նահատակուած մեր բոլոր քաջորդիներին...
Ամանորի և Սուրբ Ծննդեան արձակուրդները կը սկսուեն դեկտեմբերի 22-ից և կը շարունակուեն դեկտեմբերի 29-ին, և յունուարի 5-ին, դպրոց կը վերադառնանք յունուարի 12-ին:

Վարժարանի տնօրինուհի
Ռուզաննա Թաթուլեան

Շնորհաւոր Նոր Տարի
և
Սուրբ Ծնունդ

Վերամուտ

Այս ուսումնական տարվա դասերի մեկնարկը տեղի ունեցավ սեպտեմբերի 8-ին: Ամառային արձակուրդից հետո աշակերտները, ծնողները և աշխատակիցները վերադարձան մեծ ոգևորությամբ և պատրաստակամությամբ՝ սկսելու նոր ուսումնական տարին՝ լի նորանոր ձեռքբերումներով և հաջողություններով: Ուսուցիչների համար սա ևս մեկ հնարավորություն է ոգեշնչելու, գիտելիքներ փոխանցելու և ձևավորելու աշակերտների ապագան, իսկ աշակերտների համար՝ վերամիավորվելու ընկերների հետ, ուսումնասիրելու նոր թեմաներ և սահմանելու նոր նպատակներ:

Վարժարանի տնօրենուհի Ռուզաննա Թաթուլյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց կրթական գործընթացում ուսուցիչների, աշակերտների և ծնողների համագործակցության կարևորությունը՝ ընդգծելով, որ կրթությունը համատեղ ճանապարհ է, որն անցնում ենք միասին՝ համառությամբ և նպատակասլացությամբ: Նա վստահեցրեց, որ յուրաքանչյուր մարտահրավեր հաղթահարելի է, եթե աշխատենք միասնական և հետևողականորեն:

Մեր ուսուցիչներին մաղթում ենք մասնագիտական հաջողություններ և նվիրվածություն իրենց կարևոր առաքելության մեջ, իսկ մեր աշակերտներին՝ աշխատասիրություն, ստեղծագործականություն և նպատակասլացություն: Վստահ ենք, որ ծնողների, ուսուցիչների և հոգեբարձուների համատեղ ջանքերով այս ուսումնական տարին կդառնա նոր ձեռքբերումների, բարգավաճման և անսպառ հնարավորությունների տարի:

The academic year officially began on September 8th. After the summer break, students, parents, and staff returned with great enthusiasm and readiness to start a new school year, filled with achievements and success. For teachers, this is another opportunity to inspire, impart knowledge, and shape the future of their students. For students, it is a chance to reconnect with friends, explore new subjects, and set fresh goals.

The headteacher, Ruzanna Tatulian, in her welcome speech, emphasised the importance of collaboration between teachers, students, and parents in the educational process. She highlighted that education is a shared journey we take together with determination and purpose. She reassured everyone that any challenge can be overcome if we work unitedly and consistently.

We wish our teachers professional success and dedication in fulfilling their vital mission, and we encourage our students to embrace hard work, creativity, and ambition. With the combined efforts of parents, teachers, governors and the community, we are confident that this academic year will be one of new achievements, growth, and endless opportunities.

Հրաժեշտի միջոցառում

Սեպտեմբերի 22-ը մեր վարժարանի մանկապարտէզի բազմավաստակ ուսուցչուհի տիկին Աննա Հենդրնի աշխատանքային վերջին օրն էր: Բոլորը՝ տիկին Աննան, ուսուցչուհիները, ծնողներն և աշակերտները յուզած էին: Տիկին Աննան վարժարանում աշխատել է 45 տարի և մեծ ներդրում ունի վարժարանի կայացման գործում: Նա կրթել և դաստիարակել է հարիւրաւոր բրիտանահայ երեխաներ: Վարժարանի տնօրէնուհի տիկին Թաթուլեանն ներկայացրեց տիկին Աննայի աշխատանքային գործունէութիւնն և իր խօսքն աւարտեց հետևեալ գնահատականով:

Վարժարանի Խնամակալութիւնը, Հոգաբարձութիւնն ու Տնօրէնութիւնը բարձր են գնահատում երկար տարիների Ձեր վաստակը և նուիրուածութիւնը մեր մանկահասակ երեխաների հայեցի դաստիարակման գործում: Ձեզ մաղթում ենք ամենայն բարիք Ձեր կեանքի յաջորդ հանգրուանին:

Ուսուցչական կազմը և հոգաբարձուները դասերից յետոյ կազմակերպեցին ճաշկերոյթ, որն անակնկալ էր տիկին Աննայի համար:

September 22nd was the last day of work for our school's long-serving kindergarten teacher, Mrs. Anna Hendon. Everyone – Mrs. Anna, the teachers, the parents and the students were moved. Mrs. Anna has worked at the school for 45 years and has made a great contribution to the school's development. She has educated and raised hundreds of British-Armenian children. The school's principal, Mrs. Tatoulian, presented Mrs. Anna's work and concluded her speech with the following appreciation note -

The School's Board of Trustees, Governors and Headteacher highly appreciate your many years of service and dedication to the Armenian education of our young children. We wish you all the best in your next destination in life.

After school, a surprise gathering was organised by the school's staff members and governors to celebrate and say farewell to Mrs Anna who was very touched.

Տեր Նշան Ալավերդյանի այցելությունը

Հոկտեմբերի 13-ին դպրոցի հյուրն էր Տեր Նշան Ալավերդյանը: Ըստ սովորականի դպրոցի դասերը սկսվում են աղոթքով և այդ օրը աղոթքը անցկացրեց Տեր Նշանը: Նա Սրբազան Հոր՝ Հովակիմ Մանուկյանի կողմից շատ կարևոր խորհուրդ փոխանցեց: Սրբազան Հայրը նոր էր վերադարձել Հայաստանից, որտեղ Սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցել էր Սուրբ Միյուռունի արարողակարգին: Սրբազան Հայրը Հայաստանից իր հետ բերել էր նոր օրհնված Սուրբ Միյուռունը: Տեր Նշանը շատ գեղեցիկ, երեխաների համար հեշտ ընկալելի ներկայացրեց Սուրբ Միյուռունի իմաստը և արարողակարգի մասին, և որ այս տարի այն համընկել էր Թարգմանչաց տոնի հետ: Սուրբ Միյուռունի օրհնությունը սուրբ ծես է, օծվում է 40 տարբեր ծաղիկների յուղով: Այն 7 տարին մեկ անգամ կատարվող օրհնություն է: Օրհնության կարգը ներառում է սրբազան մասունքների օգտագործում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները – Սուրբ Նիզակը, Սուրբ Խաչի մասունքները: Սուրբ Միյուռունը օգտագործվում է մկրտության ժամանակ և հայտնի է որպես «ինքնության կնիք»: Տեր Նշանը խոսեց նաև Թարգմանչաց տոնի մասին և մի քանի հարցեր ուղղեց երեխաներին:

On October 13, Father Nshan Alaverdyan visited the school. As usual, the school's day begins with prayer, and Father Nshan led the prayer that day. He conveyed very important advice from His Holiness Father Hovakim Manukyanwho had just returned from Armenia, where on September 28 he had participated in the ceremony of preparing the Holy Oil or Miuron in the Mother See of Holy Etchmiadzin. His Holiness had brought with him from Armenia the newly blessed oil. Father Nshan presented the meaning of Holy Miuron and the ceremony in a very beautiful and easy-to-understand way for children, and that this year it coincided with the Feast of the Translators. The blessing of Holy Miuron is a sacred ritual, anointed with oil from 40 different flowers. It is a blessing performed once every 7 years. The blessing procedure includes the use of sacred relics: the relics of St. Gregory the Illuminator - the Holy Spear, the relics of the Holy Cross. The Holy Cross is used during baptism and is known as the “seal of identity.” Father Nshan also spoke about the Feast of the Translators and asked the children several questions.

Մշակույթի Օրվան Նվիրված Հանդես

Ամեն տարի հոկտեմբեր ամսին, ավանդաբար, դպրոցում նշվում է Հայ Մշակույթի օրը, որը համընկնում է Հայ Առաքելական Եկեղեցու Թարգմանչաց տոնին:

Այս տարի այն նշվեց հոկտեմբերի 20-ին: Օրվա խորհուրդը ներկայացրեց ուսուցչուհի Արմինե Սարգսյանը, նկարաշարքի ուղեկցությամբ ներկայացնելով մեր պատմության Ոսկե Դարի ժամանակաշրջանի մշակույթի գործիչներին՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից մինչև Դավիթ Անհաղթ և Անանիա Շիրակացի:

Ապա հետևեցին չորրորդից – ութերորդ դասարանների աշակերտների ելույթները: Նրանք արտասանեցին հայոց լեզվին և մշակույթին նվիրված բանաստեղծություններ: Տիկին Լենա Գիւլխանճեանի աշակերտները պատրաստել էին փոքրիկ ներկայացում՝ նվիրված հայ գրերի ստեղծման պատմությանը:

Հետաքրքիր էր 8-րդ դասարանի աշակերտների ելույթը՝ ուսուցչուհի Թամարա Մինասյան: Նրանք՝ նկարաշարքի ուղեկցությամբ ներկայացրեցին Երուսաղեմի հայ համայնքի դարավոր պատմությունն ու մեր մշակութային հարուստ ժառանգությունը:

Հանդեսն ավարտվեց երգչախմբի ելույթով:

Every year in October, traditionally, the school celebrates Armenian Culture Day, which coincides with the Armenian Apostolic Church's Translators' Day.

This year it was celebrated on October 20. The message of the day was presented by teacher Armine Sargsyan, who, accompanied by a series of pictures, presented cultural figures from the Golden Age of our history, starting with Mesrop Mashtots to David the Conqueror and Anania Shirakatsi.

Then followed the speeches of students from grades four to eight. They recited poems dedicated to the Armenian language and culture. Mrs. Lena Kulkhanjian's students had prepared a small performance dedicated to the history of the creation of the Armenian alphabet.

The speech of the 8th grade students, teacher Tamara Minasyan, was interesting. They, accompanied by a series of pictures, presented the centuries-old history of the Armenian community of Jerusalem and our rich cultural heritage.

The performance ended with a performance by the school's choir.

Մշակույթի Օրվան Նվիրված Հանդես

Ծնողական ընդհանուր ժողով

Նոյեմբերի 17-ին տեղի ունեցաւ վարժարանի Ծնողական ընդհանուր ժողովը:

Վարժարանի Խնամակալութեան ատենապետ դկտ Գառնիկ Թարվերդին ներկայներին բարի գալուստ մաղթելուց յետոյ խօսքը փոխանցեց վարժարանի տնօրինուհի տիկ Ռուզաննա Թաթուլեանին: Տիկ Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց վարժարանի կրթական վիճակը: Վարժարանի հոգաբարձուների գանձապահ տիկ Լուսինէ Պետրոսեանը ներկայացրեց վարժարանի ֆինանսական վիճակը և Easyfundraising կայքը:

Ծնողական յանձնախմբի ատենապետ տիկ Անի Անդրեասեանը ներկայացրեց ծնողական յանձնախմբի աշխատանքները:

Պարոն Կարօ Կարաբեյեքեանը և պարոն Հայկ Արմաղանեանը դուրս եկան հոգաբարձութեան կազմից, միևնոյն ժամանակ խօստացել են, որ ցանկացած հարցում օգտակար կլինեն վարժարանի աշխատանքներին:

Տիկ Սիլվա Դիլանչեանը ներկայացրեց պարոն Աբել Մանուկեանին և տիկ Անահիտ Պարոնեանին, ովքեր դիմել են մասնակցելու հոգաբարձութեան կազմին:

Ծնողական Ընդհանուր Ժողով

Պարոն Աբել Մանուկեանը և տիկ Անահիտ Պարոնեանը ընտրուեցին հոգաբարձութեան նոր անդամներ։

2024-25 ուսումնական տարւայ ընթացքում վարժարանի հոգաբարձուներն են.

Դոկտ Գառնիկ Թարվերդի- Վարժարանի Խնամակալութեան ատենապետ, Twyford CofE դպրոցի կապը.

Տիկ Սիլվա Դիլանչեան – Ատենապետ.

Տիկ Լուսինէ Պետրոսեան – Հաշուապահ.

Տիկ Անի Անդեասեան – Գանձապահ, Ծնողական յանձնախմբի ատենապետ.

Տիկ Լենա Գիւլխանճեան – Օգն Քարտուղար, ուսուցչական կազմի ներկայացուցիչ.

Տիկ Ֆլորա Թորոսեան – Ծնողական յանձնախմբի կապը.

Պարոն Աբել Մանուկեան – Ծնողների կապը.

Տիկ Անահիտ Պարոնեան - «Fund raising» խմբի համակարգող.

Ժողովի ընթացքում արուեցին բազմաթիւ առաջարկութիւններ վարժարանի աշխատանքների վերաբերեալ։

Վերջում հոգաբարձուները և տնօրինուհին պատասխանեցին ծնողներին հետաքրքրող հարցերին։

The AGM of parents took place on November 17th. After welcoming the attendees, Dr. Garnik Tarverdi, the school's Board of Trustees' Chairman, handed over to the school's headteacher, Mrs R. Tatulyan who discussed with the parents the school's structure and curriculum. Mrs. Lusine Petrosyan, the school's treasurer, presented the school's financial situation and Easyfundraising's website. easyfundraising.org.uk

Mrs. Ani Andreasyan, the chairwoman of the parents' committee, presented the work of the parents' committee. Mr. Garo Karabeyekian and Mr. Haig Armaghanian resigned from the governing body, but promised to stay in touch and help the school when needed.

Mrs. Silva Dilanchian introduced Mr. Abel Manoukyan and Mrs. Anahit Paronyan, who have applied to join the governing body.

Mr. Abel Manoukyan and Ms. Anahit Paronyan were elected as new members of the school's Governors.

The school's Governors for the 2024-25 academic year are:

Dr. Garnik Tarverdi - Chair of the School Board of Trustees, Twyford CofE School Liaison.

Mrs. Silva Dilanchian - Chair.

Mrs. Lusine Petrosyan - Accountant.

Mrs. Ani Andeasian - Treasurer, Chair of the Parents' Committee.

Mrs. Lena Kulkhanjian - Assistant Secretary, Teaching Staff Representative.

Mrs. Flora Torosian - Parents' Committee Liaison.

Mr. Abel Manoukyan - Parents' Liaison.

Mrs. Anahit Paronyan - Fund Raising Group Coordinator.

During the meeting, numerous suggestions were made regarding the activities of the school.

At the end of the meeting, the governors and the headteacher answered questions raised by parents.

easyfundraising

Ուսուցչուհիների և օգնականների վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացներ

Ինչպէս անցած տարիներին, այս տարի նույնպէս կազմակերպեցինք ուսուցչուհիների և օգնականների վերապատրաստման և փորձի փոխանակման դասընթացներ:

Սեպտեմբերի 12-ին վարժարանի տնօրինուհի տիկ Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց վարժարանի ընդհանուր ծրագիրը և դասաւանդման մի քանի նորագոյն մեթոդներ:

Նոյեմբերի 3-ին տիկ Անուշ Գեղամեանը ներկայացրեց դասն աւելի հետաքրքիր և ուսուցողական անցկացնելու իր տարիների աշխատանքային փորձը և մեթոդները:

Այս դասընթացները շարունակւելու են երկրորդ և երրորդ եռամսեակներում: Ուսուցչուհիները կներկայացնեն այն մեթոդները, որոնք յաջողությամբ կիրառում են իրենց դասաւանդման ընթացքում:

As in previous years, this year we also organised training courses and sharing good practice for teachers and assistants.

On September 12, the school principal, Mrs. Ruzanna Tatoulian, presented the school's general program and several new teaching methods.

On November 3, Ms. Anush Geghamyan presented her years of work experience and methods for making lessons more interesting and educational.

These courses will continue in the second and third terms. The teachers will present the methods that they successfully apply in their teaching.



Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Այցելություն Հայաստանի Հանրապետության դեսպանատուն

Դեկտեմբերի 1-ին՝ կիրակի օրը շատ մեծ աշխուժություն էր տիրում դպրոցի սրահում: Դպրոցը Հայաստանի Հանրապետության դեսպանության կողմից հրավեր էր ստացել: Հրավիրված էին աշակերտները, ուսուցչական կազմը և ծնողները, ծանոթացնելու Հայաստանի Հանրապետության նոր դեսպանատանը և առիթն օգտագործելով նաև երեխաներին շնորհավորելու գալիք Նոր տարին և Սուրբ Ծնունդը: Երեխաները շատ անհամբեր էին հանդիպելու պրն դեսպանին:

ՀՀ դեսպան Նորին Գերազանցություն պարոն Վարուժան Ներսիսյանը և տիկին Նարինե Մալխասյանը և դեսպանատան աշխատակիցները շատ սիրով և ուրախությամբ ընդունեցին բոլորիս: Դեսպան Վարուժան Ներսեսյանը ողջույնի խոսքով բարի գալուստ մաղթեց բոլորիս, հատկապես երեխաներին, շնորհավորեց բոլորիս գալիք Նոր տարին և Սուրբ Ծնունդը: Որից հետո երեխաները ուրախ երգով ու բանաստեղծություններով դիմավորեցին Ձմեռ պապին, ով եկել էր Հայաստանից: Երեխաները շատ ավելի ուրախացան, երբ Ձմեռ պապը բոլորին շոկոլադներ նվիրեց, իսկ տիկին Նարինեն տուփով խաղալիքներ տվեց, որպեսզի երեխաները կախեն տոնածառից և անպայման մի լավ ցանկություն պահեն: Բնականաբար, բոլորս շատ ուրախ էինք հրավերից: Մեծ շնորհակալություն պրն դեսպանին և նրա տիկնոջը այդ գեղեցիկ և կարևոր նախաձեռնության համար:

On Sunday, December 1, there was a lot of activity in the school hall. The school had received an invitation from the Embassy of the Republic of Armenia. Students, teaching staff and parents were invited to familiarise themselves with the new Embassy of the Republic of Armenia and also a chance for the new Ambassador to congratulate the children on the upcoming New Year and Christmas. The children were very eager to meet Mr. Ambassador.

The Ambassador of the Republic of Armenia, His Excellency Mr. Varuzhan Nersisyan and Mrs. Narine Malkhasyan and the embassy staff welcomed us all with great love and joy. Ambassador Varuzhan Nersisyan welcomed us all, conveyed his wishes for the New Year and Christmas. After which the children greeted Santa Claus, who had come from Armenia, with joyful songs and poems. The children were even happier when Santa Claus gave everyone chocolates, and Mrs. Narine gave the children a box of Christmas ornaments to hang them on the Christmas tree and make a good wish. Naturally, we were all very happy with the invitation and the children had a great time. Many thanks to the Ambassador and his wife for this beautiful and important initiative.

Ամանորյա խնջույք

Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնակատարություններն ու խնջույքները ամենասպասված և ամենաուրախն են: Եվ, բնականաբար, նման խնջույքները, տոնակատարությունները մեր դպրոցում նույնպես ավանդույթ են դարձել: Ասածվածք կա՝ «Ուրախ դիմավորենք Նոր տարին և ամբողջ տարվա ընթացքում ուրախությունն ու հաջողությունը միշտ մեզ հետ կլինի»: Դեկտեմբերի 14-ին դպրոցի ուսուցչական կազմը տնօրինության մասնակցությամբ, կազմակերպել էր ավանդական խնջույքը՝ նշելու գալիք Նոր տարին և Սուրբ Ծնունդը: Հրավիրված էին հոգաբարձուները և ծնողական հանձնախումբը: Մթնոլորտը իսկապես շատ աշխույժ և ուրախ էր՝ երգ, պար, գեղեցիկ բարեմաղթանքներ, նվերների փոխանակություն: Մթնոլորտը էլ ավելի ուրախ, աշխույժ դարձրեց Ձմեռ պապի(տատի)մուտքը, ով իրականում Ամանորյա խնջույքների ամենասպասված ու կարևոր հյուրն է, և իր ներկայությամբ ուրախություն է պարգևում ոչ միայն երեխաներին, այլ նաև բոլոր մեծերին: Նման խնջույքները նաև հիանալի առիթ են հադիսանում բոլորիս ավելի մտերմացնելու, համախմբելու, միմյանց շնորհակալություն հայտնելու. . . . . Խնջույքի հիմնական նպատակն էր նաև դրամական օգնություն տրամադրել դպրոցին, որի նախաձեռնությունը դպրոցի ուսուցչուհի Աիդա Եղիկյանինն էր: Արդյունքում, ուսուցչական կազմի կողմից £520 նվիրվեց դպրոցին:

Նման նախաձեռնությունները շատ կարևոր և գնահատելի են դպրոցի հետագա զարգացման և հարատևման գործընթացին:

New Year and Christmas celebrations and parties are the most anticipated and joyful. And, naturally, such parties and celebrations have also become a tradition in our school. There is a saying: “Let us celebrate the New Year with joy, and throughout the year, joy and success will always be with us.” On December 14, the school’s teaching staff, with the participation of the headteacher, organised a traditional party to celebrate the upcoming New Year and Christmas. The Governors and the Parents’ Committee were invited. The atmosphere was truly very lively and joyful: singing, dancing, exchanging gifts and beautiful wishes. The atmosphere was made even more joyful and lively by the arrival of Santa Claus (Grandma), who is actually the most anticipated and important guest of the party, and with his presence brings joy not only to children, but also to all adults. Such parties are also a great opportunity to bring all of us closer together, unite, and express gratitude to each other... The main goal of the party was also to provide financial assistance to the school, the initiative of which was that of the school's teacher, Aida Yeghikyan.
As a result, £520 was raised and donated to the school by the teaching staff. Such initiatives are very important and appreciated for the further development and sustainability of the school.

Նոր Տարվա Տոնավաճառ ու Հանդես

Նոր Տարվա Տոնավաճառ ու Հանդես

Դեկտեմբերի 15-ին դպրոցը լցվեց տոնական տրամադրությամբ: Օրը սկսվեց աշխույժ տոնավաճառով, որը կազմակերպել էին դպրոցի ծնողական հանձնախումբն ու հոգաբարձուները: Տոնավաճառը վերածվել էր աշխույժ և կենսուրախ միջավայրի՝ լցված գեղեցիկ դասավորված սեղաններով, համեղ ուտեստներով, քաղցրավենիքներով և տոնական հյուրասիրություններով:

Տոնավաճառից հետո շարունակվեց երկար սպասված Ամանորյա հանդեսը: Աշակերտները միջոցառումը սկսեցին երգելով Ամանորին նվիրված երգեր:

Այնուհետև վարժարանի տնօրինուհի՝ տիկին Ռուզաննա Թաթուլյանը ողջունեց ներկաներն, շնորհակալություն հայտնեց վարժարանի բոլոր բարերարներին: Նա շնորհավորեց բոլորին գալիք Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան տոների առթիվ:

Մինչև Ամանորի հանդէսը սկսելը նա հայտարարեց, որ այս տարի պարոն Կարօ Կարաբէյէքյանը և պարոն Հայկ Արմաղանյանը որպէս հոգաբարձուներ և տիկին Քարոլին Կարաբէյէքյանը, որպես Ծնողական հանձնախմբի անդամ իրենց աշխատանքային և ընտանեկան պայմաններից ելնելով դպրոցում չեն աշխատելու, սակայն ամեն հարցով օգնելու են դպրոցին:

Նա բեմ հրաւիրեց պարոն Կարօ Կարաբէյէքյանին, պարոն Հայկ Արմաղանյանին և տիկին Քարոլին Կարաբէյէքյանին հայտնելու վարժարանի շնորհակալությունն իրենց կատարած աշխատանքների համար:

Դրան հաջորդեց աշակերտների կողմից արտասանված գեղեցիկ բանաստեղծությունները, որոնք ընդգծեցին Ամանորի և Սուրբ Ծննդյան ոգին և իմաստը: Այնուհետև բեմում ներկայացվեց Հիսուս Քրիստոսի ծննդյան բեմադրությունը, որը հիշեցրեց բոլորին տոնի իրական իմաստը:

Միջոցառման ընթացքում երեխաները մեծ ոգևորությամբ սկսեցին փնտրել Ձմեռ պապիկին: Նրանց հուզմունքն աճում էր, երբ նրանք միասին երգում էին «Զանգակները»: Երգի վերջին ակորդների հետ միասին դահլիճում հնչեցին զանգակների ձայները, որոնք ազդարարեցին Ձմեռ պապիկի ժամանումը: Նա մեծ ժպիտով և ջերմությամբ մտավ դահլիճ:

Ձմեռ պապիկը նվերներ էր բերել բոլոր երեխաներին: Ի պատասխան՝ աշակերտները երգերով և բանաստեղծություններով ուրախացրին նրան, լցնելով դահլիճը ծիծաղով և ծափահարություններով:

Նոր Տարվա Տոնավաճառ ու Հանդես

Նոր Տարվա Տոնավաճառ ու Հանդես

Հանդեսի վերջում Բրիտանահայ համայնքի հոգևոր առաջնորդ՝ գերաշնորհ սրբազան հայր Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը ներկաներին փոխանցեց Սուրբ Ծննդյան խորհուրդը, օրհնեց վարժարանին և ներկաներին, ինչպես նաև շնորհավորեց բոլորին գալիք Ամանորի առթիվ:

Հանդեսը վարում էր մեր վարժարանի շրջանավարտ, այժմ ուսուցչուհի օրի. Վանուհին և վարժարանի աշակերտ Ջեյմս Չրչյանը

Օրն իդեալական ավարտ էր ուսումնական առաջին եռամսյակին համար, թողնելով բոլորին քաղցր հիշողություններ և միասնականության ջերմություն: 2025 թվականին բոլորին մաղթում ենք առողջություն, երջանկություն և նորանոր հաջողություններ:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

On December 15, the school was filled with a festive atmosphere. The day began with a lively Christmas fair, organised by the school's parents' committee and governors. The fair transformed into a vibrant and cheerful space, filled with beautifully arranged tables, delicious food, sweets, and festive treats.

After the fair, the long-awaited New Year celebration continued. The students started the event with songs. This was followed by beautiful poems recited by the students, which highlighted the spirit and meaning of the New Year and Christmas. Then, the Nativity scene was presented on stage, reminding everyone of the true meaning of the holiday.

Before the celebration began, the headteacher announced that this year, Governors Mr. Garo Karabeyekian and Mr. Haig Armaghanian and Mrs. Carolyn Karabeyekian, member of the Parents' Committee, will be resigning from their duties due to their work and family circumstances, but they will help the school in every way.

She invited Mr. Garo Karabeyekian, Mr. Hayk Armaghanian and Mrs. Carolyn Karabeyekian to the stage to express the school's gratitude for the work they have done for the past several years.

During the event, the children eagerly began to search for Father Christmas. Their excitement grew as they sang "Jingle Bells" together. With the final notes of the song, the sound of bells echoed in the hall, signaling the arrival of Father Christmas. He entered the hall with a big smile and warmth.

Father Christmas had brought gifts for all the children. In return, the students delighted him with songs and poems, filling the hall with laughter and applause.

The day was a perfect conclusion to the school term, leaving everyone with sweet memories and the warmth of togetherness. In 2025, we wish everyone health, happiness, and new successes. Merry Christmas and Happy New Year!

2024 - 2025 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 8 Սեպտ. 2024 – 15 Դեկտ. 2024 Term I 8 September 2024 – 15 December 2024	
8 Սեպտեմբեր 8 September	Վերամուտ Back to school
20 Հոկտեմբեր 20 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
27 Հոկտեմբեր 27 October	Արձակուրդ Half-Term Break
10 November	Open Day
17 Նոյեմբեր 17 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
15 Դեկտեմբեր 15 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 12 Յունուար 2025 – 17 Մարտ 2025 Term II 12 January 2025 – 17 March 2025	
19 January	Open Day
9 Փետրուար 9 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
16 Փետրուար 16 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
23 Փետրուար 23 February	Արձակուրդ Half-Term Break
30 Մարտ 30 March	Մայրերու Օր Mothers' Day and Open Day
6 Ապրիլ 6 April	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 27 Ապրիլ 2025 – 6 Յուլիս 2025 Term III 27 April 2025 – 6 July 2025	
4 May	Open Day
11 Մայիս 11 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
18 Մայիս 18 May	Մարզական Օր Sports' Day
25Մայիս 25May	Արձակուրդ Half-Term Break
8 June	Open Day
22 Յունիս 22 June	Դաշտահանդէս School BBQ
6 Յուլիս 6 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Անուշ Գեղամյան,Տիկ Թամարա Մինասյան,, Օրդ Վանուհի Պետրոսյան,
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան